ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/12

ք.Սպիտակ «10» ապրիլի 2020թ.

Սպիտակ համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Գագիկ Սահակյանի (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լևոն Լևոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի աշխատանքը պայմանագրինհամապատասխանող աշխատանքով անհատույցփոխարինմանողջամիտժամկետ ևպահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու աշխատանքի համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Օրենսդրության և պայմանագրի պահանջներին համապատասխան, ապահովագրական ընկերությունում ապահովագրել աշխատանքի կատարման ընթացքում աշխատակիցների կյանքը և առողջությունը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքըկամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքըկամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տուգ՝ կատարման ենթակա սակայն

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում է աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություններիմի ջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում էՀայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սպիտակ համայնք	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Եղվարդ, Նար-Դոսի 28 ա
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ, Մոսկովյան մ/հ
Հ/Հ 900242714021	Հ/Հ 15700636119801 00
ՀՎՀՀ 06801433	ՀՎՀՀ 03308717
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան	Տնօրեն՝ Լ. Լևոնյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 10 » ապրիլի 2020թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Գնային սահմանը /ՀՀ դրամի միավորով/	Գնումն իրականացվելիք /ՀՀ դրամի միավորով/	Միավորների քանակը	Կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200	Սպիտակ համայնքի 5 բազմաբնակարան շենքերի (Ս.Ավետիսյան 17, 19ա, 19բ, Ալեք Մանուկյան 14, Թորոսյան 21) էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	դրամ	4 000 0000	4 000 0000	1	ք. Սպիտակ, Շահումյան 7	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 25 օրացուցային օր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

I. Տեղեկատվություն առաջադրանքի վերաբերյալ

Աշխատանքի նկարագրությունը՝ Մասնագիտական ծառայությունների մատուցում՝
թվով 5 բազմաբնակարան շենքերի (Ս.Ավետիսյան 17, 19ա, 19բ, Ալեք Մանուկյան 14, Թորոսյան 21)էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների նախագծանախահաշվային փաթեթի կազմում

Ծրագիրը անվանումը՝
Սպիտակ համայնքի 5 բազմաբնակարան շենքերի (Ս.Ավետիսյան 17, 19ա, 19բ, Ալեք Մանուկյան 14, Թորոսյան 21) էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացում

Վայրը՝ Ք.Սպիտակ

1. **Ընդհանուր տեղեկություններ**

- Ս.Ավետիսյան 17շենք - 5 հարկանի, 5 շքամուտք, 50 բնակարան երկաթբետոնե կոնստրուկցիաներով, տանիքը հիմնանորոգված, հանքային բամբակով ջերմամեկուսացված, շքամուտքերի և նկուղներիդռները և պատուհանները փոխարինված էներգախնայող դռներով և պատուհաններով:
  Նախատեսվում է իրականացնել արտաքին պատերի և նկուղի առաստաղի ջերմամեկուսացման աշխատանքներ:

- Ս. Ավետիսյան 19ա, շենք - 5 հարկանի, 1 շքամուտքով և 20 բնակարանով, մոնոլիտ -երկաթբետոնյա, հիմնանորոգված է տանիքը, փոխարինվել են շքամուտքերի դռները էներգախնայող դռներով:
  Նախատեսվում է իրականացնել շենքի վերնաածածկի (ձեղնահարկի հատակի) և նկուղի առաստաղի ջերմամեկուսացում, ինչպես նաև շքամուտքերի և աստիճանավանդակների հին փայտյա պատուհանների փոխարինում նոր երկշերտ ապակե փաթեթով մետաղապլաստե պատուհաններով:

- Ս. Ավետիսյան 19բ շենք - 5 հարկանի, 1 շքամուտքով և 20 բնակարանով, մոնոլիտ -երկաթբետոնյա, հիմնանորոգված են տանիքը, փոխարինվել են շքամուտքերի դռները էներգախնայող դռներով:
  Նախատեսվում է իրականացնել շենքի վերնաածածկի (ձեղնահարկի հատակի) և նկուղի առաստաղի ջերմամեկուսացում, ինչպես նաև շքամուտքերի հին փայտյա պատուհանների փոխարինում նոր երկշերտ

Թորոսյան 21 շենք – 3 հարկանի, 1 շքամուտք, 6 բնակարան, երկաթբետոնե կարկասով, տուֆաքարի շարվածքով, սավաղած, փոխարինված են շքամուտքերի դռները՝ էներգախնայող դռներով:

Նախատեսվում է իրականացնել շենքի տանիքի հիմնանորոգում, վերնածածկի (ձեղնահարկի հատակի) և նկուղի առաստաղի ջերմամեկուսացում, ինչպես նաև շքամուտքի հին փայտյա պատուհանների փոխարինում նոր երկշերտ ապակե փաթեթով մետաղապլաստե պատուհաններով:

Ալեք Մանուկյան 14 շենք - 4հարկանի, 2 շքամուտքով, 16 բնակարան, մոնոլիտ-երկաթբետոնյա, փոխարինված են շքամուտքերի դռները՝ էներգախնայող դռներով:

Նախատեսվում է իրականացնել շենքի տանիքի հիմնանորոգում, ձեղնահարկի և նկուղի առաստաղի ջերմամեկուսացում, ինչպես նաև շքամուտքի հին փայտյա պատուհանների փոխարինում նոր երկշերտ ապակե փաթեթով մետաղապլաստե պատուհաններով:

2. Նախագծային կազմակերպության աշխատանքների շրջանակը, հիմնական առաջադրանքները և գործողությունները

Աշխատանքների շրջանակը

Ընդհանուր առաջադրանքը թվով 5 բազմաբնակարան շենքերի (Ս.Ավետիսյան 17, 19ա, 19բ, Ալեք Մանուկյան 14, Թորոսյան 21) էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների նախագծանախահաշվային մասնագիտական փաթեթի կազմումն է:

Կազմակերպությունը պարտավոր է հաշվի առնել հետևյալ օրենսդրական, իրավական ու նորմատիվ-տեխնիկական պահանջները.

- ՀՀՇՆ 24-01-2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»:
- ՀՀՇՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների»:
- ՀՀՇՆ II-7.01-2011«Շինարարական կլիմայաբանություն»:
- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի n 596-ն որոշում. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրաման. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ»:
- ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. մաս 1. բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմեր:
- ՀՀ կառավարության 25.12.2014թ. թիվ 1504-Ն որոշում. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»:
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»:

Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն ստորև աղյուսակում ներկայացված բազմաբնակարան շենքերի համար: Գնային առաջարկ(ներ)ը պետք է ներկայացվեն յուրաքանչյուր բազմաբնակարան շենք համար առանձնացված գնառաջարկով:

Ըստ լոտերի բաշխված շենքերի ցանկ

NN	ՇԵՆՔԻ ՀԱՍՑԵ
1	Ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան 17 շենք
2	Ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան 19ա շենք
3	Ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան 19բ շենք
4	Ք.Սպիտակ, Ալեք Մանուկյան 14 շենք

Հիմնական առաջադրանքները և գործողությունները

Մասնագիտական ծառայությունների մատուցման շրջանակներում կապալառուն պետք է իրագործի հետևյալ խնդիրները՝

1. *Նկարագրել էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների լուծումները, մոտեցումները, ինչպես նաև համալիր տեխնիկական միջոցառումները (արտաքին պատեր, ծածկեր, բացվածքներ, տանիք),*
2. *Տրամադրել օգտագործվող շինարարական նյութերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը:*
3. **Նախագծի կազմը**

Աշխատանքային նախագծի մշակում՝ ըստ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. թիվ 128-Ն հրամանի և ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշման, հավելված 1-ի՝

1. *Ընդհանուր բացատրագիր:*
2. *Առաջին հարկի և տիպային հարկի հատակագծեր, ներառյալ նկուղային և տեխնիկական հարկերը (եթե առկա է), ցույց տալով կոնստրուկցիաների բոլոր տարրերը (երկաթբետոնե կառուցվածքային տարրեր, մետաղական կառուցվածքներ, մետաղական կոնստրուկցիաների մանրամասներ, փայտե կառուցվածքներ և այլն):*
3. *Շենքի ճակատների բոլոր հիմնական տարրերի կտրվածքների գծագրերը՝ տանիքածածկի, առաստաղի, արտաքին պատերի, դռների և պատուհանների, նկուղի հանգույցները և միացումները:*
4. *Ջերմամեկուսացման շերտերի տեղադրման և ամրացման մանրամասն գծագրեր պատերի, առաստաղների, հատակի, պատուհանների և դռների հատվածներում:*
5. *Արտաքին պատերի մանրամասն գծագրերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում խողովակները, ջրահեռացման խողովակները և ջրհորդանները, կախոցները, հեռահաղորդակցության ակսեսուարները և այլն:*
6. *Անձրևաջրերի ջրահեռացման միացումների կամ ջրահեռացման այլ համապատասխան լուծումների մանրամասն գծագրեր:*
7. *Գազամատակարարման և օդափոխության համակարգերի և դրանց ջերմամեկուսացման մանրամասն գծագրեր, ներառյալ առնչվող հատակագծային լուծումները և կտրվածքները:*
8. *Հարթակների և աստիճանավանդակների ներքին լուսավորության մանրամասն գծագրերը գծային սխեմայով:*
9. *Բոլոր նյութերի և սարքավորումների տեխնիկական մասնագրերը որոնք օգտագործվելու են շինարարության ընթացքում՝ մասնավորապես, սարքավորումների և շինվածքների մանրամասն բնութագիրը (ջերմամեկուսիչ նյութեր, պատուհաններ, դռներ, լուսավորության համակարգեր և այլն):*
10. *Տեխնիկական մասնագրերը պետք է նաև ներառեն վերը նշված բոլոր մեխանիկական, էլեկտրական և սանտեխնիկական սարքավորումները և նյութերը, ինչպես նաև յուրաքանչյուր համակարգի, սարքավորման կամ նյութի տեղադրման/մոնտաժման աշխատանքների մանրամասն նկարագիրը:*
11. *Շրջակա միջավայրի պահպանման պլան:*
12. *Առողջապահական և անվտանգության պլան:*
13. *Շինարարության կազմակերպում՝ շինարարության տևողության /ժամանակացույց/ հաշվարկով (քանդման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպման նախագիծ, էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ):*
14. *Նախահաշվային փաստաթղթեր և ծավալաթերթ - պետք է ներկայացվի մանրամասն նախահաշիվ: Հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների, շինվածքների և կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր և մասնագրեր:*
15. *Բոլոր ամփոփագրերն ու մասնագրերը (քանդման աշխատանքներ, կառուցման աշխատանքներ) պետք է լինեն աղյուսակային տեսքի, որտեղ պետք է երևան ծավալները: Նախահաշիվն պետք է ներկայացվի առանձին բոլոր տարրերի համար (արտաքին պատեր, վերնածածկ, նկուղի ծածկ, դռներ և պատուհաններ, լուսավորություն):*

Շենքի նախագծերում անհրաժեշտ է նախատեսել հետևյալ աշխատանքները՝

Ս.Ավետիսյան 19ա, 19բ

- ☐ Տանիքի առկա ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ շերտերի ապամոնտաժում:
- ☐ Գոլորշամեկուսիչ և ջերմամեկուսիչ շերտերի պատշաճ իրականացում:
- ☐ Օդափոխության բոլոր խողովակները պետք է լինեն տանիքի ծածկից բարձր, որպեսզի համապատասխանեն գործող ստանդարտներին և նորմերին: Միահյուսված օդափոխության խողովակները պետք է ջերմամեկուսացվեն և պաշտպանվեն տանիքից վեր ձգվող մետաղյա ցինկապատ թիթեղով:

Թորոսյան 21, Ալ.Մանուկյան 14

- ☐ Տանիքի առկա ջերմամեկուսիչ և ջրամեկուսիչ շերտերի ապամոնտաժում:
- ☐ Տանիքի հիմնանորոգում
- ☐ Գոլորշամեկուսիչ և ջերմամեկուսիչ շերտերի պատշաճ իրականացում:
- ☐ Օդափոխության բոլոր խողովակները պետք է լինեն տանիքի ծածկից բարձր, որպեսզի համապատասխանեն գործող ստանդարտներին և նորմերին: Միահյուսված օդափոխության խողովակները պետք է ջերմամեկուսացվեն և պաշտպանվեն տանիքից վեր ձգվող մետաղյա ցինկապատ թիթեղով:

Արտաքին պատեր

- ☐ Ջերմամեկուսացնել բոլոր շենքերի արտաքին պատերի մակերևույթը: Ջերմամեկուսացման տեսակից կախված մանրամասնորեն ներկայացնել տեխնոլոգիան, շերտերի և աշխատանքների իրականացման հերթականությունը և համապատասխան նյութերի մասնագրերը:

Նկուղ

- ☐ Ջերմամեկուսացնել բոլոր շենքերի նկուղի ծածկերը: Ջերմամեկուսացման տեսակից կախված մանրամասնորեն ներկայացնել տեխնոլոգիան, շերտերի և աշխատանքների իրականացման հերթականությունը և համապատասխան նյութերի մասնագրերը:

Պատուհաններ և դռներ
Ս.Ավետիսյան 19ա, 19բ, Թորոսյան 21, Ալ.Մանուկյան 14

- ☐ Էներգաարդյունավետ պատուհանների տեղադրում աստիճանավանդակներում, յուրաքանչյուր հարկում առնվազն մեկ բարդ փականով և կարգավորումով:
- ☐ Ներքին պատուհանագոգերի տեղադրում, հերմետիկացում:
- ☐ Արտաքին պատուհանագոգի տեղադրում:

Դանուցում՝

Նախագծի բոլոր տեխնիկական բաղադրիչները, ինչպիսիք են ջերմամեկուսացումը, լուսավորությունը և այլն, պետք է հիմնավորված լինեն մանրամասն հաշվարկներով, որոնք պետք է տրամադրվեն Պատվիրատուին՝ ըստ պահանջի:

Էներգաարդյունավետության/էներգախնայողության հետ կապված բոլոր նյութերը, սարքավորումները և շինվածքները նախագծել խստորեն ըստ մանրամասն էներգետիկ հաշվարկների, ինչպես նաև առաջնորդվել «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների» խորհրդատվական ձեռնարկով, համաձայնեցնելով պատվիրատուի հետ/: Սույն ձեռնարկը հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/Advisory Handbook on Insulation 2013.pdf

4. **Ընդհանուր դրույթներ**

ա. Ներկայացնել մանրամասնորեն ուսումնասիրման արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ;

բ. Նախագիծը մշակել գործող բոլոր ՀՀ շինարարական նորմերի պահանջների համաձայն;

գ. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները,

- ☐ Կատարողը պարտավոր է ձեռք բերել շենքի բոլոր անհրաժեշտ ծավալահատակագծային փաստաթղթերը կամ իրականացնել առկա նմանատիպ շենքի մանրամասն չափագրում:

համաձայն ՀՀՔՆ14.01.2008թ. N11-Ն հրամանի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման՝ նախագծի հետ ներկայացնել նաև՝

- ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացույցային գրաֆիկը (ժամանակացույցը)
- շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները:

II. Հիմնական ակնկալվող արդյունքները

Առաջադրանքի վերջնական արդյունք է հանդիսանալու տիպային բազմաբնակարան շենքի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների նախագծանախահաշվային փաթեթը՝ ներկայացված էլեկտրոնային կրիչներով (AutoCAD և PDF ձևաչափերով), և տպագիր՝ **A3** ձևաչափի, **6** օրինակից: Նախահաշիվը և ծավալաթերթը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով (Excel ձևաչափով) և տպագիր՝ **A4** ձևաչափով **6** օրինակից:

Նախագծային ամբողջ փաթեթը պետք է պատրաստվի **հայերեն և ռուսերեն**:

III. Մասնագիտական պահանջներ

Դիմորդ կազմակերպությունը պետք է ունենա՝

Ա. Բազմաբնակարան շենքերի նախագծման առնվազն **5 տարվա** փորձ,

Բ.**Փորձառու մասնագիտական անձնակազմ**, այդ թվում՝

1. մեկ թիմի ղեկավար/համակարգող (նախագծի պատասխանատու)՝ ճարտարապետ կամ կոնստրուկտոր (առնվազն 10 տարվա աշխատանքային փորձով),
2. մեկ ավագ ճարտարապետ, առնվազն 10 տարվա աշխատանքային փորձով (որը կարող է հանդես գալ նաև որպես թիմի ղեկավար),
3. մեկ ավագ կոնստրուկտոր, առնվազն 10 տարվա աշխատանքային փորձով (որը կարող է հանդես գալ նաև որպես թիմի ղեկավար),
4. մեկ ՋԳՄՕ մասնագետ, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով,
5. մեկ էլեկտրիկ-ճարտարագետ, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով,
6. մեկ նախահաշվորդ, առնվազն 5 տարվա աշխատանքային փորձով:

Թիմի ղեկավար	Ավագ ճարտա-րապետ	Ավագ կոնստ-ռուկտոր	ՋԳՄՕ մասնագետ	Էլեկտր. մասնագետ	Նախահաշվի մասնագետ
Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն	Անուն ազգանուն
-	-	-	-	-	-

IV. Նախագծերի պահանջվող կազմը

Նախագծային փաստաթղթերը կազմելիս առաջնորդվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N273-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ»-ով:

Ներկայացվող գնառաջարկը պետք է համապատասխանի ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.02.2008թ. N19-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինական փաստաթղթերի/ծրագրային և ճարտարապետաշինարարական/մշակման աշխատանքների արժեքի հաշվարկման կարգով» նախատեսված սահմանաչափերին:

V. Ներկայացվող փաթեթը

Դիմորդ կազմակերպությունը/ընկերությունը նշված աշխատանքների իրականաց-ման համար հայտի փաթեթում պետք է ներկայացնի.

1. պետական գրանցման վկայականի պատճենը,

2. առաջադրվելով ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի N 1533-Ն որոշման (քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման), գործունեության իրականացման լիցենզիաների պատճեններ և ներդիրներ (01, 02, 03, 10),
3. կազմակերպության նմանատիպ աշխատանքների իրականացման փորձի/ծրագրերի նկարագրություն (ներկայացնել վերջին հինգ տարվա նմանատիպ աշխատանքների ցանկը, պատվիրատուի հասցեն և հեռախոսահամարը),
4. պահանջված **աշխատակիցների կողմից ստորագրված կենսագրականները** համապատասխան աշխատանքային փորձի նկարագրությամբ (ռեզյումե) և որակավորումը հաստատող փաստաթղթերը (դիպլոմի պատճեն), **ինչպես նաև** N1533-Ն որոշման համաձայն՝ ճարտարապետի և կոնստրուկտորի հավաստագրերը:

Ուշադրություն.մրցույթում հաղթող ճանաչվելու դեպքում աշխատանքները պետք է կատարեն փաթեթում ներկայացված մասնագետները: Մասնագետի փոփոխությունը թույլատրվում է այլ համարժեք մասնագետով՝ միայն պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուի պահանջով կապալառուն պարտավոր է կատարել մասնագետների փոփոխություն:

VI. Աշխատանքների կատարման ժամանակացույց

Կապալառուն ավարտված նախագծերի փաթեթը էլեկտրոնային եղանակով պատվիրատուին պետք է հանձնի պայմանագրի ստորագրման օրվանից ոչ ուշ քան 20 օրացույցային օր հետո:

Պատվիրատուն 2 օրացույցային օրվա ընթացքում կներկայացնի իր դիտողությունները, որից հետո Կապալառուն պարտավոր է իրականացնել բոլոր ուղղումներն ու փոփոխությունները և ամբողջությամբ ավարտական տեսքով վերջնական նախագծային փաթեթները հանձնել Պատվիրատուին /էլեկտրոնային և տպագիր տարբերակներով/ ոչ ուշ քան 3 օրացույցային օր հետո:

I շաբաթ	II շաբաթ	III շաբաթ	IV շաբաթ	V շաբաթ

	Նախագծման ժամանակահատված
	Պատվիրատուի դիտարկում
	Վերջնական ուղղում, տպագրություն և հանձնում

VII. Վճարման կարգը

Աշխատանքների դիմաց վճարումը կիրականացվի սահմանված կարգով փորձաքննության դրական եզրակացությանը ստանալուց հետո՝ 10 օրյա ժամկետում:

Նախագծերի տնօրինման իրավունքը պատկանում է պատվիրատուին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.
Հ/Հ 900242714021
ՀՎՀՀ 06801433
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
ք. Եղվարդ, Նար-Դոսի 28 ա
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570063611980100
ՀՎՀՀ 03308717
Տնօրեն՝ Լ. Լևոնյան

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
« 10 » ապրիլի 2020թ. կնքված
ՀՀ ԼՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-20/12 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը*
1	71241200	Սպիտակ համայնքի 5 բազմաբնակարան շենքերի (Ս.Ավետիսյան 17, 19ա, 19բ, Ալեք Մանուկյան 14, Թորոսյան 21) էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	0	0	0	4 000 000	4 000 000	4 000 000	4 000 000	4 000 000	4 000 000	4 000 000	4 000 000	4 000 000	4 000 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՀ ֆին. նախ. գործառն. վարչ.
Հ/Հ 900242714021
ՀՎՀՀ 06801433
Համայնքի ղեկավար՝ Գ. Սահակյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
ք. Եղվարդ, Նար-Դոսի 28 ա
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570063611980100
ՀՎՀՀ 03308717
Տնօրեն՝ Լ. Լևոնյան

(ստորագրություն) Կ.Տ.